

Թողարկում N4, 2018

ՀԱՅԱՍՏԱՆ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ

«ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ»
ԳՈՒԼ
ՍԵՐԳԵՅ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2018

ՀԱՅԱՍՏԱՆ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ

«ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ» ԳՈՒ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

ՍԵՐԳԵՅ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

«Հայաստան. Ֆինանսական ներգրավվածություն» վերլուծականը էլեկտրոնային պարբերական է, որի նպատակն է վերլուծել և հանրությանն ամփոփ կերպով ներկայացնել Հայաստանի ֆինանսական ներգրավվածության բաղադրիչների փոփոխությունները:

Պարբերականը հրապարակվում է ՀՊՏՀ «Ֆինանսական ներգրավվածություն» գիտաուսումնական խմբի կողմից: Արտահայտված տեսակետները և եզրահանգումները պատկանում են հեղինակներին և կարող են չհամընկնել ՀՊՏՀ պաշտոնական տեսակետի հետ:

Հրապարակումից օգտվելիս պարզաճ հղումը պարտադիր է:

ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՈՒ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ

- Ընդհանուր առմամբ, ֆինանսական ներգրավվածության աստիճանը կախված է ֆինանսական ծառայությունների՝ հատկապես տրամադրվող վարկերի նկատմամբ ձևավորված տոկոսադրույքների մակարդակներից:
- Ինչպես ցույց են տալիս թիվ 1 աղյուսակի տվյալները, բացառությամբ ՀՀ դրամով իրավաբանական անձանց առաջարկվող վարկերի, մյուս բոլոր ուղղություններով տոկոսադրույքները նվազել են: Ամենանկատելի նվազումը տեղ է գտել ԱՄՆ դոլարով ժամկետային ավանդների պարագայում (2016 թ. դեկտեմբերին՝ 6.0 տոկոսի դիմաց 2018 թ. հուլիսին՝ 2.3 տոկոս):
- Սակայն ուշադրության արժանի են ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի տոկոսադրույքների միջև հարաբերակցությունները (ըստ արժույթների): Այլ հավասար պայմաններում, դրանք ցույց են տալիս բանկերում շահույթի ձևավորման հիմքը:
- Եթե ֆիզիկական անձանց պարագայում հարաբերակցության շուրջ հարցեր չի առաջանում, ապա նույնը չի կարելի ասել իրավաբանական անձանց ՀՀ դրամով ներգրավման ու տեղաբաշման մասին: 2018 թ. հուլիսին ներգրավվել է 10,4 տոկոսով, իսկ վարկերը տրվել են 10.6 տոկոսով: Պատասխանն, ըստ ամենայնի, գտնվում է ներգրավված մյուս միջոցների վերաբաշխումների և միգրացե, բանկերի ռեսուրսային այլ աղբյուրների առկայության հանգամանքի մեջ:
- Ներգրավման ու տեղաբաշխման տոկոսադրույքների առնչությամբ ինքնուրույն նշանակություն է ստանում դրանց մակարդակների վրա ազդող գործոնների բացահայտման հիմնահարցը: Մասնավորապես, հատկապես ինչի արդյունքում է տեղ գտնում վարկերի օգտագործման տոկոսադրույքների նվազումը:

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԳՐԱՎԱԾ ԱՎԱՆԴՆԵՐԻ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՎԱՐԿԵՐԻ ԱՄՍԱԿԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ինչպես ցույց են տալիս թիվ 2 աղյուսակի տվյալները, եթե 2016 թ. դեկտեմբերին 64,6 մլրդ դրամ ներգրավման դիմաց (ֆիզիկական և իրավաբանական անձինք) տրամադրվել է 120.5 մլրդ դրամի վարկեր, 2017 թ. դեկտեմբերին՝ 97.7 մլրդ դրամի դիմաց 169.0 մլրդ դրամ, ապա 2018 թ. հուլիսին դրանք կազմել են 39.7 մլրդ. դրամի դիմաց 143.0 մլրդ դրամ: ԱՄՆ դոլարի դեպքում այդ ներգրավման ու տեղաբաշխման միջև ճեղքվածքը ժամկետի վերջին նկատելիորեն շտկվել է:
- Ընդհանուր առմամբ, 2018 թ. հուլիսին նախորդ ամսվա համեմատությամբ (ըստ արժույթների) ինչպես ներգրավման, այնպես էլ տեղաբաշխման ծավալները նվազել են:
- Սակայն հիմնական հարցը վերաբերում է նրան, թե ինչ աղբյուրների հաշ-

վին են տեղական բանկերը կարողացել կազմակերպել նշված ծավալներով վարկավորումը:

- Հարցի առաջին պատասխանը վերաբերում է նույն բանկերի կողմից ցպահանջ ավանդների ներգրավման ծավալներին: Այսինքն, ներգրավման ու տեղաբաշխման ճեղքվածքն, ըստ ամենայնի, առաջին հերթին վերաբերում է ցպահանջ տնօրինվող միջոցների առկայությունը:
- Սակայն տվյալ դեպքում սահմանափակող հանգամանք է ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված և ներկայումս կիրառվող ընթացիկ իրացվելիության նորմատիվի սահմանաչափը (60 տոկոս): Ինչը նշանակում է, որ այլ հավասար պայմաններում, եկա-

մտաբեր և մասնավորապես վարկերի մեջ տեղաբաշխելիս, առանց իրացվելիության նորմատիվի գործող սահմանաչափը խախտելու, բանկերը կարող են օգտագործել ցպահանջ միջոցների միայն 40 տոկոսը: Ընդ որում, ցպահանջ միջոցների մնացորդներն անընդհատ փոփոխվում են, ուստի խընդրահարույց կարող է լինել այդ միջոցների եկամտաբեր օգտագործումն ընդհանուր առմամբ:

- Մինևնույն ժամանակ, ինքնուրույն նշանակություն է ստանում տեղական բանկերի կողմից տեղաբաշխման ներկա ծավալները բացառապես ներգրավման տեղական աղբյուրների հաշվին կազմակերպելու հարցը:

ԱՂՅՈՒՍԱԿ 1. ՀՀ ֆինանսական շուկայում ներգրավման և տեղաբաշխման տոկոսադրույքները¹

Ցուցանիշներ	2016 թ.	2017 թ.	2018 թ.		
	դեկտեմբեր	դեկտեմբեր	մայիս	հունիս	հուլիս
Ավանդներ՝ մինչև 1 տարի ժամկետով					
Իրավաբանական անձանց					
ՀՀ դրամով	7,4	8,1	9,7	9,6	10,4
ԱՄՆ դոլարով	6,0	2,8	1,3	1,3	2,3
Ֆիզիկական անձանց					
ՀՀ դրամով	11,4	8,6	7,9	8,2	7,9
ԱՄՆ դոլարով	4,7	3,3	2,7	3,1	2,9
Վարկեր՝ մինչև 1 տարի ժամկետով					
Իրավաբանական անձանց					
ՀՀ դրամով	12,3	11,1	12,2	11,1	10,6
ԱՄՆ դոլարով	7,8	7,2	8,6	8,4	7,6
Ֆիզիկական անձանց					
ՀՀ դրամով	19,4	16,0	15,5	15,2	14,5
ԱՄՆ դոլարով	14,4	11,2	11,9	9,4	11,2

¹ Տես՝ ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր: 2016: Դեկտեմբեր: էջ՝ 56: ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր: 2017: Դեկտեմբեր: էջ՝ 66: ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր: 2018: հուլիս: էջ՝ 66:

ԱՂՅՈՒՍԱԿ 2. ՀՀ առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները² (մլն)

Ցուցանիշներ	2016 թ.	2017 թ.	2018 թ.		
	դեկտեմբեր	դեկտեմբեր	մայիս	հունիս	հուլիս
Վարկեր իրավաբանական անձանց					
ՀՀ դրամով	46.873,9	61.680,7	42.686,3	63.657,7	54.387,5
ԱՄՆ դոլարով	364,6	409,2	284,0	178,7	146,5
Վարկեր ֆիզիկական անձանց					
ՀՀ դրամով	73.641,9	107.338,8	98.962,2	92.794,9	88.553,3
ԱՄՆ դոլարով	39,8	52,1	36,3	36,1	13,3
Ավանդներ իրավաբանական անձանցից					
ՀՀ դրամով	25.403,1	35.295,1	16.595,2	16.844,4	14.679,6
ԱՄՆ դոլարով	52,7	78,9	59,9	21,6	9,7
Ավանդներ ֆիզիկական անձանցից					
ՀՀ դրամով	39.160,5	62.359,0	31.181,0	35.339,1	25.015,5
ԱՄՆ դոլարով	156,5	216,8	146,3	139,5	135,6

² Տես՝ ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր: 2016: Դեկտեմբեր: Էջ՝ 61: ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր: 2017: Դեկտեմբեր: Էջ՝ 71: ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր: 2018: Մայիս: Էջ՝ 70: ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր: 2018: Հունիս: Էջ՝ 35: ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր: 2018: Հուլիս: Էջ՝ 63: